

## Էմբարգո՝ Թուրքիայից Հայաստան ներմուծվող ապրանքների օրինակով

Հակոբյան Հ. Ռ.

ՀՊՏՀ, Ֆինանսական ֆակուլտետի մագիստրոս(Երևան, Հայաստան)  
hakobianhov@gmail.com

**Վճռորոշ բառեր՝** Էմբարգո, Տնտեսական պատժամիջոցները, սահմանափակումներ, արտահանում, ներմուծում, տնտեսական գործունեության

### Эмбарго на примере импорта товаров из Турции в Армению

Акобян О. Р.

Армянский государственный экономический университет (Ереван, Армения)  
hakobianhov@gmail.com

**Аннотация:** Государства самым разным образом реагируют на, санкции и ограничения. В статье характеризуются особенности действия эмбарго как инструмента внешнеэкономической деятельности. Инструмент, который может быть использован рядом стран для принуждения других к желаемым действиям. группируются и классифицируются виды эмбарго.

Объект работы является эмбарго на товары турецкого происхождения. Рассматриваются армяно-турецкие торгово-экономические отношения в условиях закрытых сухопутных границ. Анализируются объемы внешнеэкономической деятельности между Арменией и Турцией, а также объем отдельных товаров. Прогнозируются последствия ограничений.

**Ключевые слова:** Эмбарго, экономические санкции, ограничения, экспорт, импорт, экономическая деятельность

### Embargo՝ on the example of import of goods from Turkey to Armenia

Hakobyan H. R.

Armenian State University of Economics (Yerevan, Armenia)  
hovhakobian@gmail.com

**Abstract:** States respond to sanctions and restrictions in a variety of ways. The article describes the features of the embargo as an instrument of foreign trade activity. A tool that can be used by a number of countries to force others to take the desired actions. types of embargoes are grouped and classified.

The object of the work is an embargo on goods of Turkish origin. The article considers the Armenian-Turkish trade and economic relations in the conditions of closed land borders. The volume of foreign economic activity between Armenia and Turkey, as well as the volume of individual goods, is analyzed. The consequences of restrictions are predicted.

**Keywords:** Embargo, economic sanctions, restrictions, export, import, economic activity

**Ներածություն:** Ըստ էության, պատերազմները ընթանում են մշտապես: Գերտերությունները և հակամարտող պետություններն իրենց տնտեսական դիրքերը ամրապնդելու և հակառակորդի ամրությունն ու մրցունակ լինելը թուլացնելու նպատակով կիրառում են տնտեսական սահմանափակումներ: Ի տարբերություն ռազմաճակատում մղվող մարտերի՝ տնտեսական պատերազմները աշխարհի կողմից ստացել են «խաղաղ պատերազմ» բնորոշումը: Խաղաղ պատերազմի ամենատարածված ձևը տնտեսական ճնշումն է, որը հայտնի է «առևտրային էմբարգո» անվանմամբ, ծագում է իսպանական embargo բառից՝ «արգելք, կալանք», «խոչընդոտել, խանգարել»:

«Էմբարգո» հասկացությունն առաջին անգամ կիրառվել է XVIII դարում օտարերկրյա պետություններին պատկանող և ձերբակալված նավերի ու զենքի վերաբերմամբ:

**Էմբարգոյի տեսակները:** Տնտեսական պատժամիջոցները կարող են լինել միակողմանի

(ԱՄՆ-ն Իրանի, Եվրամիությունը՝ Ռուսաստանի դեմ) կամ բազմակողմ (ԱՄՆ-ն ու ՄԱԿ-ի երկրները՝ ընդդեմ Իրաքի, ԱՄՆ-ն ու Եվրամիությունը՝ ընդդեմ Ռուսաստանի):

Ներկայումս ակտիվորեն կիրառվում են երկու տեսակի պատժամիջոցներ՝ համապարփակ և նպատակային: Համապարփակ պատժամիջոցները կարող են տարածվել երկրի տնտեսական գործունեության բոլոր կամ առանձին տեսակների վրա՝ շոշափելով այս կամ այն ոլորտում աշխատող բոլոր տնտեսական գործակալներին: Համապարփակ պատժամիջոցները հաճախ առևտրային էմբարգոյի ձև են ընդունում:

Քանի որ առևտրային էմբարգոն և համապարփակ պատժամիջոցների այլ տեսակներ անխուսափելիորեն ազդում են երկրի տնտեսական գործունեության բոլոր մասնակիցների վրա, և պատժամիջոցների ծանրությունը ընկնում է բոլոր քաղաքացիների վրա (այդ թվում՝ նաև նրանց վրա, ովքեր իշխանական

Էլիտայի մաս չեն կազմում, անմասն են քաղաքական որոշումների կայացման գործընթացին), XXI դարասկզբին ավելի լայն տարածում ստացան, այսպես կոչված, նպատակային՝ թիրախավորված պատժամիջոցները, որոնք ստացան «խելացի պատժամիջոցներ» (*smart sanctions*) անվանումը: Այս տեսակի պատժամիջոցների նպատակներն են կոնկրետ անհատները կամ խմբերը, որոնք ունեն իշխանություն և քաղաքական որոշումներ ձեռնարկելու հնարավորություն: Պատժամիջոցներով սահմանափակվում է նրանց շարժը արտասահմանում կամ հնարավորությունը՝ օգտագործելու իրենց ֆինանսական ռեսուրսները դրսում: Այս կարգի պատժամիջոցները վերջին ժամանակներս կիրառվում են ԱՄՆ-ի և Եվրամիության կողմից Ռուսաստանի դեմ կամ վերջերս Եվրամիության կողմից՝ ընդդեմ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լու-

կաշենկոյի: Դրանք ստացել են «սև ցուցակներ» անվանումը [1]:

Մեր օրերում մշակվել է բավականին լայն գործիքակազմ, որը կարող է օգտագործվել մի շարք երկրների կողմից՝ ուրիշներին ցանկալի գործողությունների հարկադրելու համար:

Առավել հաճախ սահմանափակումների թիրախ դարձող ապրանքներն են՝ նավթ, միջուկային արտադրության և վառելիքային էներգետիկայի արտադրանք, գենք, զինամթերք, ռազմական սպառազինություն, պարենային ապրանքներ (խավիար, ձուկ, միս), պերճանքի առարկաներ, ակոհոլային խմիչքներ, էլեկտրոնիկա: Մասնակի էմբարգո կարելի է սահմանել ներմուծման և արտահանման գործառնությունների վրա՝ կիրառելով պատժամիջոցների զանազան համակցություններ (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Էմբարգոյի առարկա	Պետության պատժամիջոցները	Պետության Էմբարգոն
<b>Արտահանում</b>	Իր տարածքից ապրանքների արտահանման արգելքը (այլ պետության կողմից)	Իր տարածքից ապրանքների արտահանման համար
<b>Ներմուծում</b>	Իր տարածք ապրանքների ներմուծման արգելքը (այլ պետության կողմից)	Իր տարածք ապրանքների ներմուծման համար
<b>Արտահանում և ներմուծում</b>	Իր տարածք ապրանքների արտահանման և ներմուծման արգելքը (այլ պետության կողմից)	Ապրանքների ներմուծման և դրա տարածքից արտահանման համար

Դիտարկենք Էմբարգոյի դասակարգումը.

✓ քաղաքական Էմբարգո, որը սահմանվում է պետության կողմից՝ այլ երկրի վրա գաղափարական ճնշում գործադրելու համար,

✓ տնտեսական Էմբարգո,

✓ պետական անվտանգության պաշտպանության Էմբարգո, որը հոգ է տանում իր երկրի քաղաքացիների առողջության մասին,

✓ երկրների տարածքային վեճերի կանխման և լուծման համար կիրառվող Էմբարգո,

✓ Էմբարգո, որի նպատակն է հոգ տանել որևէ երկրի քաղաքացիների առողջության մասին,

✓ բնապահպանական Էմբարգո:

Պետությունները ամենատարբեր ձևով են արձագանքում Էմբարգոյին, պատժամիջոցներին և սահմանափակումներին:

**Իրավական բնութագրում:** Միջազգային իրավունքը ենթադրում է փոխադարձության սկզբունք միջազգային հարաբերություններում: Դա միջազգային համագործակցության հիմնա-

րար սկզբունքներից մեկն է, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի կանոնադրության առաջին և երկրորդ հոդվածներում: Հավասարությունը և փոխադարձությունը ենթադրում է, որ երկու պետություններն էլ սահմանում են փոխադարձաբար արտոնյալ կամ առնվազն համադրելի ռեժիմ, որը գործում է այլ պետության քաղաքացիների և իրավաբանական անձանց նկատմամբ [2 էջ 1-3]:

ՀՀ Սահմանադրության հոդված 11-ում ասվում է՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցության և սոցիալական արդարությանը [3, էջ 13]:

**Ռուրքական ծագման ապրանքների Էմբարգո:** 2020 թ. սեպտեմբերի 27-ին թուրքադրեջանական բանակը Արցախի դեմ սանձա-

գերծեց պատերազմ՝ փորձելով զենքի ուժով լուծել հակամարտությունը: Մի քանի ժամվա ընթացքում պատերազմը ստացավ լայնամասշտաբ տեսք, և հայկական բանկը անցավ պաշտպանողական ու հակահարձակվողական գործողությունների:

Մարտի դաշտում տրվող հակահարվածներից և պատասխաններից զատ՝ հայկական կողմը անցավ տնտեսական հարվածների՝ վերոնշյալ «խելացի պատերազմի»: Մասնավորապես ունենալով անհերքելի փաստեր այդ պատերազմին Թուրքիայի անմիջական մասնակցության վերաբերմամբ՝ ՀՀ կառավարությունը սահմանեց էմբարգո՝ «իր տարածք թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման համար»:

ՀՀ անկախության հռչակումից և Թուրքիայի կողմից այդ փաստը պաշտոնապես ճանաչելուց հետո Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև անմիջապես ձևավորվել են առևտրատնտեսական կապեր: Սակայն Լեռնային Ղարաբաղի հակամարտության պայմաններում թուրքական իշխանությունները մշտապես վերապահումով են վերաբերվել Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հնարավորությանը և մշտապես զբաղեցրել են խիստ կողմնակալ՝ ընդգծված ադրբեջանամետ դիրքորոշում: Այդ քաղաքականության բացահայտ նոտաներից էր 1993 թ. մայիսին Հայաստանի հետ ցամաքային սահմանը փակելու և հայկական ծագում ունեցող ապրանքների ներմուծման վրա էմբարգո դնելու Թուրքիայի կառավարության որոշումը [4 էջ47-56]: Սակայն քսան տարի անց՝ 2013 թ., Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ Արսեն Ղազարյանը հայտարարել է, որ հիմնվելով անցած տարիների փորձի վրա և

փորձելով նպաստավոր պահին առաջ մղել հայ-թուրքական առևտրատնտեսական կապերի լեգալացման հարցը Թուրքիայում՝ փորձել են գտնել այն որոշման տեքստը, համաձայն որի՝ 1993 թ. Թուրքիայի կառավարությունը փակել էր հայ-թուրքական սահմանը, սակայն չեն կարողացել, այստեղից կարող ենք ենթադրել, որ սահմանը փակվել է ոչ թե՛ հրամանի, այլ կարգադրության հիման վրա, հետևաբար կարող է վերաբացվել համարժեք կարգադրությամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր 2020 թ. հոկտեմբերի 20-ի թիվ 1708-Ն որոշմամբ ժամանակավոր արգելք է դրել թուրքական ծագում ունեցող վերջնական սպառման ապրանքների ներմուծման վրա: Արգելքն ուժի մեջ կլինի 2020 թ. դեկտեմբերի 31-ից:

Թուրքական ծագման ապրանքների ներմուծման սահմանափակումը ենթադրում է նախևառաջ անվտանգային բաղադրիչ՝ հաշվի առնելով քանիցս հաստատված փաստերը, ըստ որոնց՝ Թուրքիան բացահայտորեն աջակցում ու սատարում է Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական և ահաբեկչական գործողություններին: Թուրքական ծագմամբ ապրանքների ներմուծման արգելքով դադարեցվում է հայաստանյան աղբյուրներից Թուրքիայի պետական գանձարանի ֆինանսական սնուցումը, միաժամանակ կանխարգելվում է նաև թշնամական տրամադրված երկրից վերջնական սպառման ապրանքների ներմուծման միջոցով հնարավոր վտանգների ներթափանցումը Հայաստան[5]:

Ընթացիկ իրավիճակի և հետևանքների պատկերացման համար անդրադառնանք ՀՀ արտաքին տնտեսական գործունեության ցուցանիշներին և դրանում Թուրքիայի մասնաբաժնին:

Աղյուսակ 2. ՀՀ արտահանման և ներմուծման 2014-2019 թթ. ցուցանիշները և դրանցում Թուրքիայի բաժինը (1000 դոլար) [6]:


	2014	2015	2016	2017	2018	2019
<b>ՀՀ ԱՏԳ արտահանում</b>	1 547 286.8	1 485 331.9	1 791 723.7	2 237 697.6	2 412 432.7	2 636 616
<b>ՀՀ ԱՏԳ ներմուծում</b>	4 424 424.5	3 239 238.7	3 273 469.3	4 097 065.7	4 975 537.5	5 553 269
<b>ՀՀ ԱՏԳ Թուրքիայի հետ (արտ.)</b>	1 494.3	1 497.8	504.9	913.3	2 527.7	2 223.8
<b>ՀՀ ԱՏԳ Թուրքիայի հետ (ներ.)</b>	232 268.8 5.2%	136 958.2 4.2%	163 648.2 5%	222 920.8 5.4%	252 594.2 5.1%	266 856.3 4.8%
	4-րդ տեղ	6-րդ տեղ	5-րդ տեղ	3-րդ տեղ	5-րդ տեղ	



Գծապատկեր 1. Թուրքիայի բաժինը ՀՀ ներմուծման մեջ 2014-2019 թթ.:  
Հաշվարկվել է աղյուսակի տվյալների հիման վրա:


Աղյուսակ 2-ին և գծապատկերին նայելով կարող ենք ասել բավականին անկայուն ներմուծման և կայուն աճող արտահանման մեջ զգալի մասնաբաժին ունի նաև Թուրքիան: Մասնավորապես 2014-2019 թթ. ՀՀ ներմուծման 4.99 %-ը բաժին է հասել թուրքական ծագում ունեցող ապրանքներին, իսկ 2017 թ. ԱՏԳ ներմուծման ոլորտի գործընկեր պետությունների շարքում 3-րդն է եղել:

Միայն վերջին 6 տարիների ընթացքում ավելի քան 1.2 մլրդ դոլարի ներհոսք է եղել Թուրքիայի, իսկ Թուրքիայի ամբողջ համախմբված ֆինանսների 5 %-ը կազմում են ռազմական ծախսերը:



Գծապատկեր 2. 1999 - 2019 թթ. Թուրքիայից ներմուծման աճող դինամիկան (Հաշվարկվել է ըստ <http://www.armstat.am>, տվյալների հիման վրա) [6]:

Գծապատկեր 2-ից երևում է, որ հաշվի առնելով Հայաստանի և Թուրքիայի միջցամաքային փակ սահմանը՝ 1999-2019 թթ. Թուրքիայից ապրանքների ներմուծումը մշտապես աճել է:



Գծապատկեր 3. 2019 թ. ներմուծված ապրանքների կառուցվածքը (1000 դոլար) (Հաշվարկվել է ըստ <https://www.petekamutner.am/>, տվյալների հիման վրա) [7]:

Թուրքիայից 2019 թ. ներմուծված ապրանքների թվում առավել զգալի դիրք ունեն 2. մեխանիկական սարքերը և կենցաղային տեխնիկան, 3. հանքահումքը, 4. սննդային ծագում ունեցող ապրանքները, այդ թվում՝ ցիտրուսային մրգեր, բանջարեղեն և պատրաստի սնունդ, 5. նավթը, 6. քիմիական ծագում ունեցող ապրանքները, այդ թվում՝ լվացող և մաքրող հեղուկներ, 7. շինարարական տեխնիկան, 8. հագուստը, 9. թանկարժեք մետաղներն ու դրանցից պատրաստված իրերը:

Նշենք նաև, որ միայն 2019 թ. Թուրքիայից ներմուծվել է 76392.9 (հազ. դոլարի) հագուստ և կոշիկ, ինչը կազմել է թուրքական ներմուծման 28.6 %-ը: Դա իր հերթին կազմել է 2019 թ. Հայաստան ներմուծված կոշիկի և հագուստի 21%-ը:

Անդրադառնալով հագուստի թեմային՝ հիշենք, որ սույն թվականի սեպտեմբերին ՀՀ կառավարության և ՊԵԿ-ի դիմաց բողոքի ակցիաներ էին իրականացնում հագուստ և կոշիկ ներմուծողներն առ այն, որ այսուհետ հագուստը կմաքսագերծվի ոչ թե կիլոգրամով, այլ քանակով, ինչի արդյունքում մաքսագերծման համար ավելի մեծ գումար պետք է վճարել: Ակցիայի մասնակիցները նշում էին, որ համաճարակի հետ կապված՝ արդեն իսկ ունեն հետագա տնտեսական գործունեության ֆինանսավորման խնդիրներ, այդ իսկ պատճառով ոչ տեղին էին համարում մաքսային արժեքի որոշման կանոնների փոփոխությունը՝ պահանջել իրականացնել մաքսային վճարների տարաժամկետում: Սակայն հարցի վերջնական լուծման բացակայության պայմաններում արդեն մեկ ամիս անց, անվտանգային բաղադրիչից ելնելով, ՀՀ կառավարությունը սահմանեց էմբարգո՝ «իր տարածք թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման համար», որի զգալի մասը հագուստն ու կոշիկն էր:

Հոկտեմբերի 22-ին ՀՀ կառավարության պաշտոնական լրահոսից տեղեկացանք, որ Հայաստանի փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի նախաձեռնությամբ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի առաջիկա նիստի օրակարգում կընդգրկվի և կքննարկվի մի շարք երկրներ, այդ թվում՝ Թուրքիան, ԵԱՏՄ սակագնային արտոնությունների միասնական համակարգից օգտվող երկրների ցանկից հանելու վերաբերյալ հարցը[5]: Համաձայն Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 36-րդ հոդվածի («զարգացող կամ առավել թույլ զարգացած երկրների ծագման ապրանքների նկատմամբ կիրառվող սակագնային առանձնաշնորհումները») ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից տրամադրվում են սակագնային արտոնություններ: Արտոնություններից օգտվող երկրների ցանկերը

հաստատվել են 2009 թ. Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ: Ներկայումս արտոնություններից օգտվում է թվով 103 երկիր[8, էջ 14]:

### Եզրակացություն

1. Չնայած պաշտոնական հարաբերությունների բացակայությանը և փակ սահմաններին՝ հայ-թուրքական առևտրատնտեսական հարաբերությունները կայուն մակարդակի վրա են եղել՝ կազմելով Հայաստանի ներկրման ընդհանուր ծավալի կարևոր մասը:

2. Թուրքիայում մշտապես ուշադրության կենտրոնում են պահել ՀՀ տնտեսական վիճակը՝ ենթադրելով, որ փակ պահելով ցամաքային սահմանը՝ հնարավոր կլինի պարտադրել Հայաստանին իր կողմից Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման նպատակից հրաժարվել և ամենաէականը՝ իրագործել Լեռնային Ղարաբաղից հայկական զինված ուժերը դուրս բերելու պահանջը, ինչն աղբյուրական դիրքորոշմանը սատարող և այդ դիրքորոշումը կրկնող երևույթ է:

3. Հատկանշական է, որ ցամաքային փակ սահմանների պայմաններում Հայաստանի և Թուրքիայի գործարարները մշտապես այլընտրանքային տարբերակներ են փնտրել՝ փոխափոխելով առևտրատնտեսական կապեր հաստատելու և զարգացնելու համար: Թուրքական կառավարության վերոհիշյալ էմբարգոյի պայմաններում թուրքական ապրանքների ներկրումը Հայաստան իրականացվել է Վրաստանի, ավելի փոքր չափով՝ Իրանի տարածքով, ընդ որում՝ այդ երկրներում փոխվել են ապրանքագրերը՝ դրանք հետագայում Հայաստան հասցեագրելու նպատակով:

4. 2020 թ. դեկտեմբերի 31-ից թուրքական ծագման ապրանքների ներմուծման էմբարգոյի պայմաններում ապրանքների պակասուրդ չի առաջանա, քանի որ դրանք կլրացվեն այլ շուկաներից Հայաստան ներմուծումների միջոցով կամ էլ հենց տեղական արտադրության շնորհիվ: Տնտեսվարողները, որոնք զբաղվում են թուրքական ապրանքների ներմուծմամբ, երկարաժամկետ կտրվածքի համար պահեստավորում են ապրանքները՝ ենթադրելով, որ 2021 թ. երկրորդ հատվածում էմբարգոն կհանվի:

Ակնհայտ է, որ այս սահմանափակումները, որոնք համընկան 2020 թ. համաճարակով պայմանավորված տնտեսական անկմանը, հաջորդող տարբեր ժամանակամիջոցներում իրենց ներգործումը կունենան գնաճի, դրամի արժեզրկման, իրական եկամուտների անկման, ներդրումների կրճատման մեջ (առանց այն էլ ունենք ցածր ներդրումային միջավայր), և 2018 թվականից կանխատեսվող կայիտայի

ներհոսքի փոխարեն կունենանք կապիտալի արտահոսք:

**Հ.Գ. Աշխատանքը խմբագրվել է մինչև 2020 թ. նոյեմբերի 10-ը, ՀՀ վարչապետ Փաշինյանի, Ադրբեջանի նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի կողմից ստորագրված հայտարարությունը:**

**Օգտագործված գրականության ցանկ**

1. The New York Times /E.U. Agrees to Penalize Lukashenko, but Gives Him Time to Back Down:
2. ՄԱԿ-ի Կանոնադրություն [https://www.un.org/res/UN%20Treaties/Charter\\_arm\\_unicode](https://www.un.org/resolutions/UN%20Treaties/Charter_arm_unicode)

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն
4. **H. Kotanjian, A. Safarian**, A View on Armenian-Turkish Relations in the Contexts of Regional Development, Regional Studies, Volume 1, Yerevan, 1996,
5. <https://www.gov.am/am/news/item/14934/>;
6. <https://www.armstat.am/am/>;
7. <https://www.petekamutner.am/>;
8. Պայմանագիր եվրասիական տնտեսական միության մասին:
9. **А. Кудрин, Е. Гурвич** Новая модель роста для российской экономики

*Сдана/Հանձնվել է՝ 14.11.2020*  
*Рецензирована/Գրախոսվել է՝ 25.11.2020*  
*Принята/Ընդունվել է՝ 09.12.2020*